

3385

ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐ ԲՈԼՈՐ ՅԵՐԿՐՆԵՐԻ, ՄԻԱՑԵՔ

ԾՐԱԳԻՐ

ԱՆԱՍՏՎԱԾՆԵՐԻ
ԲԱՆՎՈՐԱԿԱՆ
ԽՄԲԱԿՆԵՐԻ
ՊԱՐԱՊՄՈՒՆՔՆԵՐԻ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՅԵՎԱՆԻ ԿՈՄԻՏԵՅԻ ԱԳԻՏ-ՊՐՈՊ ԲԱԺՆԻ

ՅԵՐԵՎԱՆ — 1928

215

Օ-89

23 SEP 2009

ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐ ԲՈԼՈՐ ՅԵՐԿՐՆԵՐԻ, ՄԻԱՑԵՔ

215
8-89

Ծ Ր Ա Գ Ի Ր

ԱՆԱՍՏՎԱԾՆԵՐԻ ԲԱՆՎՈՐԱԿԱՆ
ԽՄԲԱԿՆԵՐԻ ՊԱՐԱՊՄՈՒՆՔՆԵՐԻ

1003
13617



Հ Ր Ա Տ Ա Ր Ա Կ Ո Ւ Ք Յ Ո Ւ Ն
Հ. Կ. (Բ)Կ. ՅԵՐԵՎԱՆԻ ԿՈՄԻՏԵՅԻ ԱԳԻՏ.-ՊՐՈՊ. ԲԱԺՆԻ
Յ Ե Ր Ե Վ Ա Ն — 1928

717578

ՏՊԱՐԱՆ ՀԵՐՄԵՍ
 ՀՐԱՏԱՐԱԿԳՈՒԹՅԱՆ,
 ՄԱՐԲՍԻ ՓՈՂ. № 29
 ԳՐԱՌԵՊ. 597Բ
 ՏԻՐԱԺ 600.

Ծ Ր Ա Փ Ի Ր

ԱՆԱՏՏՎԱԾՆԵՐԻ ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ԽՄԲԱԿՆԵՐԻ
ՊԱՐԱՊՄՈՒՆՔՆԵՐԻ

Ներկա ծրագիրը բաղկացած է 18 թեմայից, վորը կարելի չէ անցնել 19 պարապմունքով:

Բացի, «Կյանքի ծագումը յերկրի վրա, տեսական-քի և մարդու ծագումը» թեմայից, մնացած թեմաներից յուրաքանչյուրին հատկացվելու չէ մեկական պարապմունք: Այսպիսով, շարաթական մեկ պարապմունք ունենալու դեպքում, հաշվելով նաև լրացուցիչ կրկնողական պարապմունքները, ամբողջ ծրագիրը կարելի չէ սպառել 5—5½ ամսում: Թեմաներից չորսը («Լենինը կրոնի մասին», «Կինը և Կրոնը», «Ծննդյան տոնի ծագումը», «Զատիկը և մայիսի 1-ը»), անցնելու չեն համապատասխան տոներից առաջ, իսկ մնացածները՝ ծրագրում նշված կարգով:

Ստորև տալիս ենք պարապմունքների որինակելի մի սխեմա, վորն, իհարկե, նայած տեղական պայմաններին, կարելի չէ փոփոխություն չենթարկել:

Յուրաքանչյուր թեմայից հետո մատնանշված է համապատասխան գրականություն, վորը պետք է առաջարկվի ընթերցել տվյալ թեման անցնելուց մեկ կամ յերկու շաբաթ առաջ: Այսպիսով, խմբակում

մասնակցողները պարապմունքի կգան արդեն քիչ թե-
շատ նախապատրաստված, նախորոք կազմած հարցե-
րով, այս կամ առկա հասկացողություններով-
Գործն այսպես ղնելով՝ ավելի քիչ վտանգ կա պա-
րապմունքները ղեկավարի դասախոսությունների մե-
ջիկի վերածելու: Ճանկալի յի, վոր խմբակի անդամ-
ները յուրաքանչյուր պարապմունքի համար շարաթա-
կան մոտ 18—20 յերես տանը մշակման յինթարկեն:

Դրանից բացի, մի քանի պարապմունքի համար
մասնանշված ե խմբակում ընթերցելու գրականու-
թյուն: Ոգտակար կլինի նույնպես ժամանակ առ ժա-
մանակ խմբակում ընթերցել այնպիսի գեղարվեստա-
կան յերկեր, վորոնք հակալրոնական նշանակու-
թյուն ունենան ե այսպես թե այնպես վերաբերվե-
տվյալ թեմային: Կարելի յի ոգտագործել Զիրյանովի
կամ Դլագոլեվայի քրիստոմատիան, ինչպես նաև
Գուրեվի «Хрестоматия Молодого безбожника»:
Յուրաքանչյուր պարապմունքի համար տալիս ենք
թեմայի վերաբերմամբ մեթոդական կարճառոտ ցուց-
մունքներ:

ԱՆՅՆԵԼԻՔ ԾՐԱԳՐԻ ՍԽԵՄԱՆ

I. Ներածություն. — Կրոնը և պրոլետարիատը (1 պա-
րապմունք):

II. Գիտությունը յեվ կրոնը. — (4 պարապմունք):

1. Աշխարհի և յերկրի ծագումը:

2—3. Տեսակների և մարդու ծագումը: Կյանքի
ծագումը յերկրի վրա:

4. Հրաշքները և բնության ու մարդկային հա-
սարակության որենքները:

III. Կրոնի յեվ քրիստոնեյության ծագումը. —
(3 պարապմունք):

1. Կրոնական հավատալիքների ծագումն ու զար-
գացումը:

2. Քրիստոնեյության ծագումը և նրա սոցիա-
լական տրմատները:

3. Յեղեղ և արդյոք քրիստոս, և ինչպես ե յերե-
վան յեկել քրիստոնեյությունը:

VI. Կրոնն ի սպաս շահագործող դասակարգերի
(2 պարապմունք):

1. Կրոնի դերը կապիտալիստական յերկրներում:

2. Վոչ քրիստոնեյական կրոններն ի սպաս շահա-
գործող դասակարգերի:

V. Կրոնն ի սպաս կապիտալիզմին յեվ ինքնա-
կալությանը Ռուսաստանում (2 պա-
րապմունք):

1. Ուղղափառ և լուսավորչական դավանանքներն
ի սպաս կապիտալիզմին և ինքնակալու-
թյանը Ռուսաստանում և Հայաստանում:

2. Յեկեղեցին և Հեկտեմբերյան ու Նոյեմբերյան
հեղափոխությունները:

VI. Աղանդավորությունը յեվ սոցիալիստական
շինարարությունը (1 պարապմունք):

VII. ԽՍՀՄ անուսվածների միությունները յեվ
հակակրոնական պրոպագանդայի մե-
թոդները (1 պարապմունք):

VIII. Եպիգոդիկ պարսպաճուճների քեմաները՝

1. Լենինը կրոնի մասին:
1. Կինը և կրոնը:
3. Ծննդյան տոնի ծագումը:
4. Ձատիկը և մայիսի 1-ը:

I. ԿՐՈՆԸ ՅԵՎ ՊՐՈԼԵՏԱՐԻԱՏԸ

Ի՞նչ և կրոնը: Կրոնը վորպես գերբնականին հա՝ վատալու միջոցով դասակարգային հարստահարության գործիք: Կոմունիզմը կրոն համարող հայացքների սխալականությունը: Կրոնի շահագործողական գերը դասակարգային հասարակության մեջ—կրոնի ոգտագործումն ի նպաստ շահագործողների՝ կրոնական աշխարհաճանաչողության, կրոնական զգացողության և ծիսակատարության միջոցով: Կրոնի քարոզած բարոյականության շահագործողական նշանակությունը: Պաշտամունքի սպասավորների ուղղակի և անմիջական աշխատանքն ի նպաստ տիրող դասակարգերի: Հավատացյալների անձնական կրոնական ապրումները և կրոնի որդեկալի հետադիմական դերը հասարակական կյանքում: Կրոնի հակահեղափոխական դերը բուրժուական յերկրներում: Դասակարգային կռիվ և բարձրաստիճան զարգացման հասած ինդուստրիալ աշխատանքի նշանակությունը պրոլետարիատին կրոնական կապանքներից ազատագրելու խնդրում: Հոկտեմբերյան հեղափոխության և սոցիալիստական շինարարության ազդեցությունն անաստվածության

աճման վրա: ՆեՊ-ի և սոցիալիստական շինարարության դժվարությունների ազդեցությունը կրոնական տրամադրությունների վրա:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԽՄԲԱԿԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Учебник для рабочего антирелигиозного кружка, — „Религия и пролетариат“ գլուխը, կամ՝ Ярославский Ем.— „Религия и РКП“, հրատ. „Безбожник“-ի, 1925 թ. (հջ՝ 12-16, 29, 32-36): „Что такое религия, и почему надо бороться с ней“.

ՂԵԿԱՎԱՐԻ ՀԱՄԱՐ

Сарабьянов Вл.— „Об антирелигиозной пропаганде“, — „Религия и пролетариат“ գլուխը (հեղինակը կրոնի թերի սահմանումն և տալիս, վորովհետև կրոնը գերբնականին վերաբերյալ իդեանների մի սխառմ և համարում):

Плеханов, Г.— „Вторая статья о религии“, առաջին գլուխ, հրատ. Ուկրաինական Պետհրատի, 1925 թ., հջ՝ 63—67:

ՄԵԹՈԴԱԿԱՆ ՑՈՒՑՄՈՒՆՔՆԵՐ

Կրոնը բնորոշելիս՝ հատկապես անհրաժեշտ և վորոշակիորեն մշակել այն գրությունը, թե չկա կրոն առանց գերբնականին հավատալու: Ժամանակակից խոշոր կրոնների մեջ (քրիստոնեական, մահմեդական,

յերբայական և այլն) այդ գերբնականն, ամենից առաջ աստվածն է, տպա հրեշտակները, սրբերը և այլն, Մի քիչ ավելի պարզացնելով այս հարցադրումը, կարելի յն ցուցաբերել այն թեզիսը, թե չկա կրոն առանց աստծու. (պարզացումն այն է այստեղ, վոր նախամարդկանց և ժամանակակից վայրիսնիների կրոններն ունեն գերբնականի և հոգու իղեա, բայց դեռ ծանոթ չեն աստծու իղեային):

Այսպիսի բնորոշումով արդեն հեշտ կլինի յերևան բերել հավատացյալների այն սխալը, յերբ նրանք հավասար մակարդակի վրա յեն դնում, որինակ, հեղափոխական և կրոնական տոները:

Կրոնական զգացողությունը համառոտակի բնութագծելիս՝ անհրաժեշտ է ընդգծել նրա յերկայակ բընույթը—մեկ կողմից՝ անոգնականության, թուլության ու վախի զգացմունքը (անա թե ինչու տնտեսապես և քաղաքականապես ընկճված, կամ թե չէ բնության ուժերի դեմ իրենց ուժերից վեր պայքար մղող դասակարգերն ամենից ավելի յեն կրոնապաշտ լինում), մյուս կողմից՝ հույսի և ակնկալության զգացմունքը, վոր մի շարք կրոնամոյսների մոտ եքստազի յի հասնում: (Կրոնը վորպես ժողովրդի հաշիշ):

Կրոնի դասակարգային շահագործողական դերը բնութագծելիս՝ կարևոր է ընդգծել այն հանգամանքը, վոր այդպիսի դեր կատարում է կրոնն որեկտիվորեն, շնորհիվ իր իրականների, զգացողության և գործողությունների սխտեմի, շնորհիվ իր բարոյական քարոզի, և վոր հավատացյալները չեն նկատում կրոնի այդ որեկտիվ դերը, նրանք սուբեկտիվորեն կարող են ամենաուրախ տրամադրությունների ապրումներ ունենալ

աւ յերևակայել, վոր կրոնն իրենց է վերաբերում միայն, վոր նա «մասնավոր գործ է, իրենց անձնական գանձը» և այլն:

Ինչպես այս, այնպես և հետագա բոլոր պարամունքների համար կարևոր է ոգտագործել տեղական նյութերը և խմբակում մասնակցողների անձնական փորձն ու գիտողությունները. (որինակ, նախահեղափոխական և ներկա պրոլետարիատի անաստվածության աճումը բնութագրելիս, այս կամ այն ձևերով կության հավատացյալ աշխատավորների պրոլետարական ստաժը պարզաբանելիս և այլն):

Ոգտակար է նույնպես այս կամ այն դրությունը լուսաբանել թե խՍՀՄ և թե կապիտալիստական յերկրների յեկեղեցականների ժամանակակից պրակտիկայից վերցրած որինակներով: Այսպես, ապացուցելու համար այն խնդիրը, թե հոգևորականությունն սպասարկում է տիրող դասակարգի շահերին, կարելի յի փաստեր բերել հանքագործների գործադուլի ժամանակ անգլիական յեկեղեցականների հայտնաբերած գործունեյությունից:

II. ԿՐՈՆԸ ՅԵՎ ԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ

ՍԵՔՈՂԱԿԱՆ ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Բնագիտության ծրագրում մատերիալիստական աշխարհայեցողության առավել խոր հարցեր են շոշափված, հարցեր, վորոնց լուծման ուղիները դեռ նոր-նոր է մշակում ժամանակակից գիտությունը:

Գիտութեան հեղինակութեան դեմ կատարած իրենց յեղույթներում՝ կրօնի ներկայացուցիչներն ամեն կերպ ընդգծում են այդ հանգամանքը, ճգնելով հավատացյալներին մեջ այն տպավորութիւնն առաջ բերել, թե բնութեան հետախուզութեան ներկա գիտական յեղանակը միանգամայն սնանկ է: Իրականութեան մեջ, մենք, իհարկէ, ներկայումս չենք կարող ճշտորեն ասել, թե ինչպէս է յերևան յեկել կյանքը մեր յերկրի վրա, բայց այդ հիման վրա ամբաստանել գիտական աշխարհայեցողութիւնը սնանկութեան մեջ, ասել է չհասկանալ ներկա գիտական հետախուզութեան իսկական ելութիւնը: Անհնար է գիտական աշխարհայեցողութիւնը պատկերացնել ընդմիշտ քարացած վիճակում: Գիտութիւնը զարգանում է, նոր տեղեկութիւններ են հավաքւում, կատարելագործւում են փորձանոթները, նրբանում են հետախուզութեան մեթոդները և, դրա հետ մեկտեղ, խորանում է բնութեան մեր ճանաչողութիւնը, ճշտւում, զարգանում: Կրօնի մեջ է միայն, վոր ամեն ինչ կանխորոշված է մեկ անգամ ընդմիշտ, ինչպէս հավատացնում են տերտերները: (Իրականութեան մեջ, մենք գիտենք, վոր կրօնական մտապատկերները նույնպէս զարգանում են): Ուստի և պնդել, թե գիտութեան համար ամեն ինչ պարզ է, ամեն ինչ հայտնի, — ասել է կանգնել տերտերական պատփոքումի վրա, անցնել մտածողութեան դոգմատիկ յեղանակին: Մեր պրոպագանդայի ընթացքում մենք պետք է ընդգծենք, գլխավորապէս, մեր հետախուզական մեթոդների իսկութիւնը, վստահելիութիւնը և հաջողութիւնը, մեր ունկնդիրներին պատվաստենք փաստերի հետ միայն գործ ունենալու

սովորութիւնը և սկսպտիկ վողի զարգացնելը հավատքի բոլոր դրութիւններին նկատմամբ: Ճշմարտութիւնը գիտութեան կողմն է վոչ թե նրա համար, վոր նա այդ ճշմարտութիւնը տիրապետել է մինչև վերջին ինստանցիան, այլ նրա համար, վոր նա ճիշտ ճանապարհի վրա յ է կանգնած: Ուստի և ծրագրեն անցնելիս առանձնապէս կարևոր է ծանոթացնել հետախուզութեան յեղանակներին հետ:

Կարևոր է նույնպէս վորոշել գիտութիւնը կրօնին հարմարեցնելու և գիտական դրութիւնները կրօնական ցնդաբանութիւնների հետ համաձայնեցնելու ուղղութեամբ կատարվող փորձերի սոցիալական քննութիւնը: Աստված, հոգի կամ թե չէ կյանքի խորհրդավոր ուժեր բնագիտութեան մեջ քաշ առաւ ամեն մի փոքր տիրող դասակարգերի սնանկութիւնն և վկայում, դասակարգեր, վորոնք արդեն դադարել են առաջ շարժվել, քանի վոր հետազայում նրանց կործանումն է սպասվում: Գիտական մատերիալիստական աշխարհայեցողութիւնն իր զարգացման ընթացքում անցել է այն սահմանները, վորոնց ներսում սպասարկում էր տիրող դասակարգերին: Բնագիտութեան վերջին յեղրակացութիւններն սպանում են կրօնը, վոչնչացնում են հոգու հավատքը, կենդանու ու անկենդանի հոգեկան ու նյութականի կարծեցյալ տարբերութիւնը: Բոլոր այս բաները՝ կրօնը, հոգին, աստված և այլն տիրող դասակարգերի համար են անհրաժեշտ՝ իրենց տիրապետութիւնը վավերացնելու համար, ուստի և բնագիտութիւնը, տերտերականութիւնից մաքրվելով, ներկայումս ուղղված է բուրժուազիայի դեմ, իսկ մատերիալիզմը խեղաթուրելով

ամեն մի փորձ վոչ այլ ինչ է, յեթե վոչ գիտական հարցերը կարծեցյալ ապաքաղաքականությամբ (апо-литичность) քողարկելու խորամանկ մի քաղաքակա-նություն:

Ինքնըստինքյան հասկանալի յե, վոր բնագիտու-թյան պարապմունքներն առանց ակնառու պիտույք-ների հաջողությամբ ընթանալ չեն կարող: Անհրա-ժեշտ է բերել դիտողի տիպեր, պլակատներ (որինակ՝ Ուկրաինական հակակրոնական ցուցահանդեսի պլա-կատները), եքսկուրսիաներ կազմակերպել զեպի հա-մապատասխան թանգարանները, աստղագիտական կայանները, գետեզրը, ձորը, կազմակերպել ամենից ավելի հանդիպող հանածոների հավաքման գործը և այլն: Ճանկալի կլինեն նույնպես պարապմունքի ժա-մանակ ամենապարզ փորձեր կատարել, որինակ՝ նյու-թի պահպանության հարցերի մասին, պարզ որգա-նիզմների գոգոման զեպքում առաջացած մեքենայա-կան պատասխանների և այլ հարցերի շուրջ: Վերջա-պես, անհրաժեշտ է ամեն կերպ ոգտագործել ունկըն-դիրների արտադրական փորձի որինակները:

Բնագիտության պարապմունքների ժամանակ կարևոր է նույնպես յիրևան բերել բուրժուական գիտ-նականների բարեպաշտության պատճառները: Բնական գիտությունների ասպարիզում նշանավոր մասնագետ-ներից շատերը պահպանում են հաճախ բարձրագույն ուժի, բանականության, կատարելագույն եյակի, մեկ խոսքով՝ աստծու միամիտ հավատքը, վորի համար և հնարում են մեծատառով գրվող ամենաճոճում կոչում-ներ:

Այս յերևույթի սլառճառն այն է, վոր այդ գիտ-

նականները, իրենց համար աննկատելի կերպով, կրում են բուրժուական իդիոլոգիայի ազդեցությունը և ան-գիտակցաբար ճգնում են համաձայնեցնել իրար հետ գիտության յեզրակացություններն ու կրոնը՝ վերջինս պահպանած լինելու նկատառումով: Դրանից բացի, շատ զեպքում գիտնականներն իրենց բնագավառումն են միայն մասնագետ: Հասարակական բնույթ կրող հարցերում, վորոնք հատկապես կարևոր են կրոնական յերևույթներն ըմբռնելու տեսակետից, նրանք հաճախ մեծ սոցիալություն են յերևան հանում: Յեվ այդ հան-գամանքն էլ արգելում է նրանց պոկ գալու բուրժու-ական իդիոլոգիայի ազդեցությունից: Իսկ իրենց բնա-գավառում, բնության յերևույթների հետախուզության մեթոդների մեջ, բուրժուական գիտնականները կանգ-նած են մատերիալիզմի հողի վրա: Բացի զրանից, ան-հրաժեշտ է նախազգուշացնել, վոր խմբակի անդամնե-րը սխալ չհասկանան այն, թե ի՞նչ դեր են խաղում բնագիտությունը և ընդհանրապես գիտությունն աշ-խատավորներին կրոնից ազատագրելու պրոցեսում: Գի-տությունը չի կարող հաղթահարել կրոնը՝ առանց դա-սակարգային կովի, առանց իրենց մասսաների մաս-նակցության՝ շահագործողների դեմ մղվող պայքարին և սոցիալիզմ կառուցելու աշխատանքին: Այն հայաց-քը, թե գիտությունը ունի վերսալ միջոց է կրոնի դեմ պայքարելու համար, այդ հայացքը հակակոնսական աշխատանքն է իջեցնում և մինչև կուլտուրարության աստիճան, թուլացնում է այն և իրականում հաճախ հանգում է կրոնի ամրացմանը, միայն թե ավելի նուրբ ու դիմակավորված ձևով:

Խմբակի անդամների համար հանձնարարված գը-

բաղանդությունը պետք և տալ վաղորոք, նախքան ընդհանուր հավաքույթը, խմբակային աշխատանքի համար նախապատրաստված հող ունենալու նկատառումով: Բնագիտության մեթոդիկայի շուրջ ոգտագործել Բ. Մ. Զավադովսկու „Естествознание и религия“ աշխատությունը:

1. Աշխարհի յեվ յերկրի ծագումը

1. Աստվածաշնչի հեքյաթներն աշխարհի ստեղծագործության մասին: Ի՞նչպես ելին պատկերացնում աշխարհի կառուցվածքը հին Բաբելոնում, աստվածաշնչի պատմությունը: Աշխարհի ստեղծագործության վերաբերյալ յերկու իրար հակասող պատմություններն աստվածաշնչում և նրանց տարբեր ծագումը:

2. Նյութի և եներգիայի հավիտենականությունը: Նյութի հիմնական հատկանիշները: Նյութի բազմազանությունը վերաբերում են հիմնական տարրերի տարբեր միացությունների արգասիք: Նյութի՝ մեկ գոյաձևից մյուս գոյաձևին անցնելը: Նյութի և եներգիայի պահպանության որոշումը: Մեր յերկրի նյութական կազմը և նրա ազդակցությունը մյուս յերկնային մարմինների նյութական կազմի հետ: Տիեզերքի բաղկացուցիչ տարրի՝ նյութի հավիտենական գոյությունը: Աշխարհի «ստեղծման» անպետքությունը և անկարելիությունը: Ասածու լինելության կոսմոլոգիական փաստարկության վայրենական ընդլայնումը: Բոլոր իրերի վորեն ելակի կոզմից ստեղծված լինելու մտապատկերների ծագումը՝ աշխատանքի դարձիքների և տնային կահուսարքի արտադրման նմանողությունը:

3. Տիեզերքի կառուցվածքը և արեգակնային համակարգության ծագման գիտական տվյալները: Յերկրի գնդաձևության և յերկրագնդի շարժման ապացույցներ: Յերկրագնդի ներքին կառուցվածքը և արեգակնային համակարգության մյուս մարմինների կառուցվածքը: Զոդակնային ուղիքը և մոլորակների պտույտն արեի շուրջը: Արեք և արեգակնային համակարգությունը: Գիսավորները, աստղերը, ամպամածությունները: Յերկնային մարմինների կազմության գիտական յենթադրությունները:

4. Յերկրի ապագան: Միջմոլորակային տարածության ջերմությունը: Յերկրագնդի առտիճանական սառումը: Լուսինը վորպես մեր մոլորակի ապագա պատկեր: Յե՞րբ և տեղի ունենալու յերկրի վերջնական սառումը և արեի մարումը: Աշխարհի կործանման ավետարանական դատարկաբանությունները:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ և ՄԲԱԿԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՀԱՄԱՐ

„Учебник для раб. антирел. кружка“ — „Происхождение мира и земли“ — գրուխը, կամ՝

Ярославский, Ем. — „Библия для верующих и неверующих“, մասն 1, II, և III գլ. (կա և հայերենը):

Малинин. — „История мира“ առաջին յերկու գլուխները:

Кеткович. — „Наука и религия“ գլ. IX. „Астрономическая картина мира“.

Сухов. — „Религия в свете современного знания“, 2-րդ մաս, գլ. 1.

Вл. Попов.— „Происхождение земли и мира“,

ՀԵԿԱՎԱՐԻ ՀԱՄԱՐ

1-ին բաժնի համար.

Աստվածաշնչից՝ «Կիրք ծննդոց» զլ. Ա. հջ՝ 1—30
(մոտ.) զլ. Բ. հջ՝ 4—25 (մոտ.):

Степанов.— „Происхождение нашего бога“.
զլ. II. „Библейский рассказ о сотворении
мира“.

2-րդ բաժնի համար.

Гурев Г.— „Мироведение безбожника“ զլ.
VII— „Круговорот мирового вещества“
հջ՝ 165—181, զլ. XIV— „Энергия мира“,
հջ՝ 312—324:

Проф. Циммер.— „Начальная физика“, § 144—
понятие о сохранении энергии, հջ՝ 196—
197: Դրանից բացի, նյութի հավիտենական-
նությունը որևէ հիմնավորումը կարելի չէ
գտնել քիմիայի յուրաքանչյուր դասա-
գրքում կամ ֆիզիկայի դասագրքերի՝ քիմի-
ական հիմնական որևէ բանի համառոտ
բացատրությունների մեջ: Աստծու լինելու-
թյան կոսմոլոգիական փաստարկության
մասին կարգալի Գурև-ի հոդվածը „Безбож-
ник“-ի № 7 և 9-ում:

3-րդ բաժնի համար.

Гурев Г.— „Мироведение безбожника“, զլ.
զլ. II, III, IV, V, VI, VIII և IX.

Джинс Д., Фесенков К.— „Новейшее учение
о происхождении мира“.

Аррениус— „Образование миров“.

4-րդ բաժնի համար.

Гурев Г.— „Мироведение безбожника“, զլ. XI
„Будущее земли“, նույն հեղինակի հոդ-
վածը „Антирелигиозник“-ի № 7 և 9-ում:
Մ ա տ թ հ ո ս ի Ա վ հ տ ա ռ ա ն, 24-րդ զլուխ:

ՄԵԹՈԴԱԿԱՆ ՑՈՒՑՍՈՒՆՔՆԵՐ

Սույն թիմայի ամենակարևոր հարցը տիեզերքի
սկզբնավորության հարցն է: Հավատացյալները հա-
ճախ չեն ել առարկում յերկնային մարմինների կազ-
մության վերաբերյալ գիտական հիպոթեզների դեմ,
բայց նյութի և էներգիայի պահպանության որևէ
նրանց համար ընդունելի չէ և վնչ մի կերպ, քանի
վոր արմատապես վոչնչացնում և աստվածաշնչի՝ աշ-
խարհի ստեղծագործության վերաբերյալ հեքյաթները:
Այս որևէ ապացուցման վրա լուրջ ուշադրություն
պետք է դարձնել: Անհրաժեշտ է այս ինդըրի վերա-
բերյալ փորձ կատարել. որինակ՝ կշիռքի հավասարա-
կշիռ նմարի վրա այրվող մոմի փորձը: Այս փորձի
նկարագրությունը կարելի չէ գտնել քիմիայի յուրա-
քանչյուր դասագրքում: Եներգիայի պահպանության
որևէ կարելի չէ պարզաբանել ջերմամեքենաների
որինակով: Դրանից բացի, կարևոր է նաև ուշադրու-
թյուն դարձնել քննության յենթակա հարցի վերա-
բերյալ տերտերական առարկությունների վրա: Նրան-
ցից ամենից ավելի տարածվածներն են աստված

ստեղծեց նյութը՝ հավիտյան պահպանվելու, չքայքայվելու հատկությունը տալով նրան: Այս առարկություն մեջ աչքաթող և արված այն հանգամանքը, վոր նյութը վոչ միայն չի վոչնչանում, այլև վոչնչից ստեղծվել չի կարող: Յերկրորդ, ավելի տարածված առարկությունը հանգում և այն բանին, թե անհնար և պատկերացնել աշխարհի հավիտենական գոյությունը: Այս առարկության պատասխանը կարելի չի գտնել Գուբելի հոգվածում (տես „Антирелигиозник“), Զգողականության որևէ կարելի չի բացատրել մալինիսի փորձով (ի պատասխան «Ինչու մարդիկ յերկրից վայր չեն թափվում» հարցին), իսկ կենտրոնախույս ուշի ազդեցությունը՝ շրջապտույտների հանրածանոթ որինակով: Մեր մոլորակի գիտական հիպոթեզները շոշափելիս՝ կարևոր և ընդգծել, վոր ներկայումս ևլ են աշխարհներ «ստեղծվում»: Ժամանակակից աստղագետներն իրենց ինստրումենտների ոգնությունը գիտում են յերկնային մարմինների յերևացումները և անհետացումները: Պարապմունքի ընթացքում անհրաժեշտ և վորոշակի կերպով հակադրել տիյիզերքի վերաբերյալ գիտական պատկերացումներն աստվածաշնչի հեքյաթային պատկերացումներին: Աստվածաշունչը և գիտությունը միանգամայն բաժանվում են միմյանցից թե տիյիզերքի ծագման և թե կառուցվածքի հարցերում (անհրաժեշտ և բացահայտել աշխարհի գեոցենտրիկ պատկերացման վայրենական քնույթը և ցույց տալ, թե հանուն նրա լինչպիսի անողք պոյքար և մղիլ յեկեղեցին):

2—3. Տեսակների յեվ մարդու ծագումը. Կյանքի ծագումը յերկրի վրա

1. Տեսակների ծագումը: Կենդանիների հանածո մնացորդները, Նատվածքային լեռնատեսակների կազմությունը, Յէրբ ևն ապրել հանածո մնացորդներն սկզբնավորող լեռնատեսակները: Կենդանական աշխարհի ծննդաբանական ծառը: Յերկրի տարիքի աստվածաշնչի վորոշման անհեթեթությունը: Կենդանական տեսակների փոփոխման պրոցեսն ըստ հանածո մնացորդների (Ներկա ձիու նախահայրերը): Որգանիզմների փոփոխականությունը՝ միջավայրի ազդեցությամբ: Արհեստական ընտրությունը: Միջուրինի և Բերթանկի փորձերը: Գոյության կոիվը բնության մեջ և բնական ընտրությունը: Դարվինի ուսմունքի հիմունքների կարճատու շարադրանքը: Աստվածաշնչի պատմություններ ստեղծագործության առանձին ակտերի մասին և նրանց անհեթեթությունը: Որգանիզմի կառուցվածքի նպատակահարմարությունը՝ վորպես բնական ընտրության հետևանք: Աստվածլինիլություն, աստվածաբանական փաստարկման սնանկությունը:

2. Մարդու ծագումը: Մարդու և կենդանու ազգակցությունը: Մարդու և կենդանու նմանությունը՝ հոգեկան կյանքի դրսևորման ձևերում: Մարդու և մարդանման կապիկների նմանության զծերը: Արյան կազմի և որգանների նմանությունը: Հոգեկան կյանքի դրսևորումը կապիկների մոտ: Որգանների անհետացումը մարդու մոտ: Մարդու սաղմի զարգացումը և բիոգենետիկական որևէքը: Մարդու հանածո նախնիքները: Մարդու և կապիկի ծագումը մի ընդհանուր

նախաճորից: Աշխատանքի դերը մարդու ծագման մեջ: Աստվածաշունչը պատկերացնում է մարդուն վորպես բնության արքայի, վորի համար ստեղծված է աշխարհս:

3. Կյանքի գոյացումը յերկրի վրա: Բջիջը վորպես ամեն կենդանի որգանիզմի հիմունք: Ամենապարզ միաբջիջ որգանիզմները, Նբանց զլիաւոր կենսական գործառնությունները (նյութերի փոխանակություն, գրգռականություն, բաժանում): Հնարավոր է արդյոք ինքնաձնությունը ներկա պայմաններում: Լուի Պասյորի փորձերը: Ամենապարզ որգանիզմներին բնության անկենդան մարմիններից դանազանելու նշանների պայմանականությունը: Բյուրեղների ձևերի փորոշվածությունը: Բյուրեղների աճումն ու շրջադաշտումը: Շնչառություն և ալրում: Ամենապարզ որգանիզմների՝ արտաքին գրգիռներին պատասխանելու մեքենականությունը: Կյանքի գոյացման գիտական յենթադրությունները: Կյանքի ինքնաձնության հիպոթեզը: Կյանքի հավիտենականության հիպոթեզը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԽՄԲԱԿԻ ԱՆԴՈՄՆԵՐԻ ՀԱՄԱՐ

„Учебник для раб. антирелигиоз. кружка“ —
„Происхождение видов и человека“ և
„Происхождение жизни на земле“ զբյուրները, Կամ՝

Ярославский—„Библия для верующих и неверующих“ I մաս, IV և V գլուխները:

Малинин—„История мира“, III, IV և V գլուխները:

Кеткович—„Наука и религия“ X գլ. „История земли“.

Сухов—„Религия в свете современного знания“ 2-րդ մաս, գլուխ II.

Рубакин—„Как и когда появились люди на земле“.

ՂԵԿԱՎԱՐԻ ՀԱՄԱՐ

1-ին բաժնի համար.

Гурев Г.—„Мироведение безбожника“, գլ. X —„Прошрое земли“, Էջ 238—255:

Пр. Сементовский—„История органического мира на земле“ (ամբողջությամբ):

Тимирязев „Дарвин и его учение“.

Гарвуд —„Обновленная земля“.

2-րդ բաժնի համար.

Жуков—„Происхождение человека“ Կամ՝

Анучин—„Происхождение человека“.

Энгельс—„От обезьяны к человеку“.

3-րդ բաժնի համար.

Гурев Г.—„Мироведение безбожника“, գլ. X —„Прошрое земли“, Էջ 227—238:

Рожков—„Живая и мертвая материя (ամբողջությամբ):

Завадовский Б.—„О коробке консервов и о происхождении жизни на земле“.

Азимов—„О происхождении жизни на земле“

ՄԵՔՈՒԱԿԱՆ ՑՈՒՑՄՈՒՆՔՆԵՐ

Կյանքի ծագման հարցը հակակրոնական պրոպագանդայի համար նույնքան կարևոր է, Վորքան աշխարհի Եսկզրի՝ հարցը: Ոգտվելով այն հանգամանքից, Վոր գիտությունը ներկայումս չի կարող ճշտորեն Վորոշել, թե ինչպես է գոյացել կյանքը, տերտերները չարաշահություն են անում այդ պրոբլեմի վրա, ճգնելով խորտակել գիտական ճանաչողության հեղինակությունը: Ուստի կարևոր է ընդգծել այս ասպարիզում հոչակված մասնագետների յիակատար հավատարիացումները՝ դրված խնդրին զրական լուծում տալու համար: Բաղդատելով կյանքի զարգացման գիտական պատկերն աստվածաշնչի պատմվածքի հետ, անհրաժեշտ է նկատի ունենալ գիտական տվյալներն աստվածաշնչի հետ համաձայնեցնելու տերտերական խորամանկությունները: Ուստի առանձին ուշով պետք է ընդգծել աստվածաշնչի պատմության վայրենական դարաշրջանին հատուկ բնույթը, անհրաժեշտ է խորտակել տերտերական այն հավատարիացումները, թե աստվածաշնչի պատմվածքն առանձին խոր իմաստունի, յերևան բերել, թե ինչպես աստվածաշնչի պատմվածքներում պահպանվել են հին, քիչ կուլտուրական, թափառաշրջիկ Ժողովուրդների անհավատությունների արձագանքները:

4. Հրաբխները յեվ բնության ու մարդկային հասարակության ուրեմները

1. Բնության յերևույթների որինականությունը և նրա անկախությունը մարդու ցանկություններից՝

Մարդկային հասարակությունն ինչպես է ուսումնասիրում բնության որենքները և ինչպես է նրա յերևույթները յենթարկում իր կամքին: Գիտության և տեխնիկայի նվաճումները (Երեքտրականություն, ռադիո, յերիտասարդացում): Աստվածային նախախնամության վերաբերյալ կրոնական ուսմունքի սնանկությունը: Հրաշքներն անկարելի յեն, քանի Վոր նրանք բնության յերևույթների ընդհանուր որինականության յախտումն են նշանակում: Աղոթքների ավելորդությունն ընդհանուր որինաչափության գիտական տվյալների տեսակետից: Հունձքի աղոթքը և տրակտորը: Առողջության աղոթքը և բժշկական ոգնությունը:

2. Հրաշքի հնարավորության վերաբերյալ մտապատկերների ծագման պատմությունը: Յերևույթներին անհրաժեշտ հաջորդականության մտապատկերները բացակայությունը վայրենիների մոտ: Մասունքները, սրբապատկերները, հիվանդությունների հրաշագործ բուժումները: Գիտակցական ստի, Ժողովրդական համբավի և ինքնաներշնչման դերը հրաշքների մասին առապելներ հնարելու ինդրում: Հրաշքներ հնարելու քաղաքական իմաստը: Հակահեղափոխական ապիտացիան և հրաշքների մասին շրջող լուրերը: Հրաշագործների վրա կատարված քրեական դատավարության նմունքներ:

Ինչպես բնական, այնպես և հասարակական յերևույթները յենթակա յեն անհրաժեշտության որենքին: Պատերազմն աստվածային պատուհաս չե, այլ շահագործողների թալանչիական քաղաքականության արգասիք: Շուկայի գներին տատանումները Վորոշակի

պատճառների հետևանք են: Տապալելով բուրժուազիային՝ պրոլետարիատն աստիճանաբար տեր կդառնա մարդկային հասարակության յերևույթներին և իր կամքին կենթարկի նրանց: Հիմնականում՝ առանձին մարդու բախտը վորոշվում է նրա դասակարգային դրությունից: Աստվածային նախախնամությունը հասարակական կյանքի յերևույթների մեջ վոչ մի տեղ չունի:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԽՄԲԱԿԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՀԱՄԱՐ

„Учебник“—„Чудеса и законы природы“
գլուխը կամ՝

Фридман—„Библейские чудеса и законы природы“ (մի քանի նմուշներ):

Сименов—„Гора Афон—фабрика святых.“

Рубакин—„Среди тайн и чудес“.

Корвин—„Зеркало папизма“—„Лавка старьевщиков“ բովինը:

ՂԵԿԱՎԱՐԻ ՀԱՄԱՐ

Бухарин—„Теория ист. материализма“ գլ. I և II.

Гурев—„Мероведение безбожника“ (գլ. I. „значение мироведения“).

Сборник МК ВКП (б)—„Коммунизм и религия“ մատուցողների բացման արձանագրություններ, հոգվածներ զմասման մասին:

• ՄԵՅՈՂԱԿԱՆ ՅՈՒՑՄՈՒՆՔՆԵՐ

Առաջագրված թեմայի նպատակն է պարզաբանել այն խնդիրը, վոր հրաշքը վոչ այլ ինչ է, յեթե վոչ բնության որենքների խախտում է, վորպես այդպիսին, իրականություն մեջ տեղ չունի: Անհրաժեշտ է, սակայն, նկատի ունենալ, վոր կրոնի ներկայացուցիչներն այս հարցում հաճախ խորամանկությունների յեն գլմում: Նրանք յերբեմն պնդում են, թե հրաշքը յերևույթների որինաչափության խախտումն է, այլ, ինչպես նրանք են արտահայտվում, բնության ռստորինս որենքների հպատակեցումը մեղ անհայտ քարձրագույնս որենքներին: Այսպիսի պնդման անանկությունն ակներև է: Յեթե հրաշքը բացառությունն է, ապա նա հրաշք է և աստու ամենախրոդությունն, առհասարակ, գոյության մասին վկայել չի կարող,

Այս բաժնի յերկրորդ խնդիրն է—պարզաբանել թե ինչպիսի պայմանների հետևանքով է, վոր մարդկային հասարակության մեջ յերևան է գալիս հրաշքի մտապատկերը, վորպես ախարհի գիտական պատկերի լիակատար հակադրություն: Այլ կերպ ասած, նշել հրաշքի մտապատկերների մեջ յեղած այն հին, վայրենական, նախնադարյան սովորության փացորդներն, վորով մարդիկ շրջապատի բոլոր յերևույթներն ըմբռնում էյին մարդկային հաւարակության յերևույթների նմանողությամբ:

Հարկավոր է առանձնապես շեշտել պատճառականության որենքը հասարակական յերևույթներին նկատմամբ կիրառելու միտքը, քանի վոր հավատացյալները, չգիտենալով հասարակական յերևույթներին

ճշգրիտ պատճառները, զրանց համարում են վորպես
գերբնական անգո աշխարհից կախում ունեցող՝ յերե-
վույթներու Բացի դրանից, անհրաժեշտ և առանձնա-
պես ընդգծել, վոր հրաշքներ ընդհանրապես գոյու-
թյուն չունեն, վոչ բնության և վոչ ել հասարակու-
թյան մեջ:

III. ԿՐՈՆԻ ՅԵՎ ՔՐԻՍՏՈՆԵՅՈՒԹՅԱՆ ԾԱԳՈՒՄԸ

1. Կրոնական հավատալիքների ծագումն ու զարգացումը

Կրոնական մտապատկերների բացակայությունը
նախամարդկանց մոտ և դրա՝ նախնադարյան արտա-
դրության պայմաններից բխող պատճառները: Տեխ-
նիկայի աստիճանական զարգացումը, ժամանակավոր
կասումները, Վիրավորների և հիվանդների ինամքը՝
«Մահ» հասկացությունից ծագումը: Մարմինը կառա-
վարող յերկվորյակի (հոգու) յերեան զալը՝ աշխա-
տանքի գործիքները կառավարող մարդու նմանողու-
թյամբ: Նախնադարյան անիմիզմի ամրացումը՝ մահ-
վան, յերազներին, ուշաթափություններին և հիվան-
դություններին սխալ բացատրություն տալու միջոցով:
Հոգու արտաքին տեսքը և նրա բնակավայրը մարմ-
նում: Հանդերձյալ կյանքի մտապատկերների զարգա-
ցումն՝ ըստ թաղման ձևերի, Դժոխքի և զրախտի ուս-
մունքը վորպես ավելի հետագա ժամանակների յերե-
վույթ և հասարակության զասակարգային բաժանվա-
ծության անդրադարձումն: Հոգու իդեալի սոցիալա-

կան դերը նախնադարյան համայնքում (նրա ոգա-
գործումը համայնքի ավագ սերունդների կողմից ի-
նպատ իրենց շահերի): Քրիստոնեական տեսու-
թյունները հոգու մասին: Նախնիկների կույլը: Տոտե-
միզմ: Նրանց սոցիալական դերը: Տոտեմիզմի մնա-
ցորդները քրիստոնեությունից մեջ, (սուրբ հոգին ա-
ղափու կերպարանքով, հիսուս-գառնուկ, որինակներ
ԽՍՀՄ ժողովուրդների հեթանոսական կրոններից):

Հոգագործությունն ու անասնապահուկ յունը և
բնության կույլը: Ցեղերի և ազգությունների
կազմվելը, Ցեղային և ազգային աստվածներ: Պետու-
թյան ծագումը: Իշխանություն կենտրոնացումը:
Կույլդի կենտրոնացումը: Ցերկնային արքայությունը
վորպես յերկրային թագավորության անդրադարձում:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԽՄԲԱԿԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՀԱՄԱՐ

„Учебник для раб. антирелигиоз. кружка“ — „Воз-
никновение и развитие религиозных веро-
ваний“ գլուխը, կամ՝

Степанов — „О душе, загробной жизни, о боге и
бессмертии“ կամ նույն հեղինակի — „Очерк
развития религиозных верований“.
Հանդերձյալ կյանքի մասին կարևոր և կարգալ
նախ՝

Ярославский — „Как родятся, живут и умирают
боги и богини“ (Գլ. XVII — „Загробная жизнь
по учению православной церкви“, Գլ. XX —
«Մահմեղականություն», 1923 թ., էջ 195 — 207):

**ԽՄԲԿՈՒՄԱ ԸՆԹԵՐՑԵԼՈՒ ՅԵՎ ՂԵԿԱՎԱՐԻ
ՈՂՏԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՄԱՐ**

Ներքոհիշյալ ձևանարկներից մեկն ու մեկը՝

Кунов—„Возникновение религии“, 1922թ., հջ 39-44:

Тэйлор Эд.—„Первобытная культура“, հատ. II, СПБ, 1896-7թ., հջ 12—13—15, հոգու բնակավայրը, հջ 17—19. հոգին վորպես կյանքի պատճառ, հջ 32—33. հոգին վորպես նյութական կշիռի կյուծյուն, հջ 27—29. հոգին թողնում է մարմինը մահվան ժամանակ. հջ 30. հոգու տեսքը:

Тихтарев К. М.—„Очерки по истории первобытной культуры“—„Первобытное общество“—հջ 74—79, 1907թ. հրատ.

Тэйлор Эд.—„Антропология, введение в изучение человека и цивилизации“ գլ. XIV, 1923թ. հր.

Шурц Генрих—„История первобытной культуры“ հավատքի և ուրվականների մասին, հջ 634—638: Բույսերն ու կենդանիները վորպես մեռած մարդկանց հոգիների բնակավայրեր, 638—639: Մեռյալների յերկրները, 640—643: Յերկյակ հոգի, 643—644:

Летурно Ш.—„Социология основанная на этнографии, 1897թ., գլ. XV—„Загробная жизнь“, հջ 144—146: Ավելի լավ կլինի վերցնել—„Представление о загробной жизни у полинезийцев“, հջ 152—156:

ՄԵԹՈԴԱԿԱՆ ՑՈՒՑՄՈՒՆՔՆԵՐ

Այս նյութն անցնելիս՝ խմբակում մասնակցողներին պետք է յուրացնել տալ այն հիմնական միտքը:

Վոր կրոնը մարդուս բնածին հատկությունը չէ, վոր նախամարդիկ սկզբնական ժամանակներում չերեք ել կրոն չեն ունեցել: Անհրաժեշտ է վորոշակի պատկերացնել այն խնդրեր, թե ինչպես է շարկապվել կրոնական հավատալիքների զարգացումը եկոնոմիկայի և արտադրության յեղանակների հետ և ինչպես է անդրադարձել կրոնի զարգացման վրա դասակարգային պայքարը: Անհրաժեշտ է տառնձնապես ուշադրություն դարձնել նախնազարյան հավատալիքների ու քրիստոնեյության բաղդատության, ինչպես նաև ժամանակակից ծիսակատարությունների և սովորույթների մեջ պահպանված կրոնական անհետացած ձևերի մնացորդների վրա:

Կրոնի ծագման վերաբերմամբ, ինչպես հայտնի չի, գոյություն ունեն մի քանի տեսություններ: Սյուտեղ տվյալ թեման անցնում է ընդհանուր առմամբ ըստ Ստեպանովի, բայց ավելացրած է մի կետ՝ նախնազարյան համայնքի ավագ և կրտսեր սերունդների պայքարում անիմիզմի խաղացած դերի մասին (եյլ-դերման): Սկսնակ խմբակում, ի հարկի, կարիք չկա կանգ առնել զանազան թեորիաների քննության վրա միայն թե պետք է ընդգծել Հինրիխ Հունտլի այն սըխալը, վոր նա վայրենիներին համարում է ժմանդամայն բնական դուալիստներ: Նախամարդը դուալիստ է դառել շնորհիվ հասարակարգից բղիթո պատճառների և վոչ թե դուալիզմը նրա ֆիզիոլոգիական բնությունից: Հատկանիշն է հանդիսանում: Իսկ յեթե կրոնի ծագման մյուս թեորիաների հարցը կլուսավորի խմբակի պարապմունքների ընթացքում, ապա ուրեմն հարկ կլինի բացատրել, վոր, չնայած բոլոր տարածայնու-

թյուններին, կա բոլորի կողմից ընդունված մի գրու-
թյուն, ըստ վորի զարգացման առաջին աստիճանի
վրա կրոնը գոյություն չի ունեցել:

Այս գրությունը սպանիչ է կրոնի բնածին հան-
գամանքը շեղող տերտիրական թեորիայի նկատմամբ:
Անհրաժեշտ է ընդգծել, վոր կրոնի անիմիստական
ծագման թեորիան ներկայումս հաստատուն գիրքեր է
գրավում, և վոր գոյություն ունեցող վեճը վոչ թե անի-
միզմի մասին է, այլ անիմիզմի ծագման մասին:

2. Քրիստոնեության ծագումը յեվ նրա սոցիա- լական արմատները

Հռոմեական կայսրության ստրկատիրական տըն-
տեսության ըայքայումը, Հռոմեական հասարակու-
թյան բոլոր խավերին համակած անկման տրամադրու-
թյունները (մոլորվածություն, փրկիչ-աստվածների
վորոնում, տնային խոստովանահայր — ղեկավարների
առաջացումը, դյուրահավատություն և հրաշքի ծարավ,
միստերիա): Այս հոդի վրա՝ տառապող աստծու, աշ-
խարհի փրկչի առասպելի յերեան գալը: Տարագիր հրե-
աները, նրանց կյանքի սոցիալ-տնտեսական պայման-
ները և այդ ժամանակվա հրեական կրոնական հավա-
տախմբների մի քանի մոմենտների վերամշակումն ըստ
այդ պայմանների (որինակ՝ հոգու կրոն փոխանակ ծի-
սային կրոնի, մեսսիանական ակնկալություններին
միջազգայնական բնույթ տալը, փոխանակ պաղեստին-
յան կրոնի նեղ-հայրենասիրական և անհանդուրժո-
ղական բնույթի): Նախնական քրիստոնեական հա-
մայնքները, Աղանդավորների և վերանորոգչականների

(обновленцы), մեզ մոտ՝ ազատ յեկեղեցականների
չափազանցություններն այդ համայնքների կոմու-
նիստական կարգի մասին: Քրիստոնեական «կոմու-
նիզմի» սպառողական բնույթը: Յեպիսկոպոսական իշ-
խանության զարգացումը և յեկեղեցական հայրերի
կազմակերպությունները: Քրիստոնեյության հարմարե-
ցումը պետական պահանջներին կոստանդին Մեծի ժա-
մանակ: Քրիստոնեյության մուտքը Հայաստան: Հե-
թանոսական կրոնի պատվաստումը լուսավորչական
կրոնին:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԽՄԲԱԿԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՀԱՄԱՐ

„Учебник для раб. антирелиг. кружка“ про-
исхождение христианства и его социаль-
ные корни“ — գլուխը կամ՝
Лобачев — „Правда о христе и христианстве“
հջ՝ 3—38.

Лагинов А. — „Тезисы по вопросам антерели-
гозной пропаганды“

Ագապործիկ Լուկաչևսկու թեզիսները „проис-
хождении христианства“).

ՂԵԿԱՎԱՐԻ ՀԱՄԱՐ

Каутский — „Происхождение христианства“
2-րդ բաժին, գլ. I—II. 3-րդ բաժին գլ. I,
II, III.

հենց ազդարարան բնույթի հակասություններ.

- ա) Հիսուսի ծննդաբերությունը — Մատթեոսի ազդարարան, I, Ղուկասի ազդարարան, III.
 բ) Լեռան քարոզը, — Ղուկաս, VI, Մատթեոս V.
 գ) Մատանանների հալածանքը — Մատթեոս, VIII, Ղուկաս, VIII.
 զ) Հիսուսի վերջին խոսքերը — Հովհան, XIX, Ղուկաս, XXIII.
 ի) Հարություն հրեշտակներ — Մատթեոս, XXVIII, Հովհան, XX.
 զ) Վոր լիւթից համբարձվեց — Մատթեոս, XXVIII, Ղուկաս, XXIV, գործք առաքելոց, գլ. 1.
 ե) Խորհրդավոր ընթրիքը — Մատթեոս, XXVI, Մարկոս, XIV, Ղուկաս, XXII, Հովհան, XIII, XIV, XV, XVI, XVII.
 ը) Գրիստոսի կերպարանքն ըստ. Հովհաննու, IV, V, Ղազարոսի հարություն ժամանակ, XI, Յերուսաղեմ մտնելիս, XII.
- II. Հիսուսի սեռմունքի հակասությունների մասին (մանրամասն կարելի չի գտնել Немоевский — „Бог Иисус“ հջ 23—28, նաև Ярославский — „Как рождаются, живут и умирают боги и богини“)
- Պարապմունքի վերջում պետք է կարդալ՝ Древс — „Моф и христе“, 2-րդ հատորը, „о Назарете“ (հջ 175—178). կարելի չի և Немоевский — „Бог Иисус“.

Տվյալ պարապմունքի ընթացքում անհրաժեշտ է առանձին ուշադրություն դարձնել հետևյալ մոմենտներին.

1. Անհրաժեշտ է ցայտուն կերպով յերևան բերել հոռմեյական կայսրության այն ժամանակվա եկոնոմիկան, տնտեսական անկման հետևանքով առաջացած ճգնաժամը ստրկական տնտեսության միջև անկումային տրամադրությունների ծավալումը: Անկումային տրամադրությունները հատուկ են յիդել այն ժամանակվա բոլոր դասակարգերին: Անհրաժեշտ է առանձնապես ընդգծել, վոր հին-հռոմեյական պրոլետարիատը պարագիտ մի դասակարգ է յեղել, վոր այ պրոլետարիատն ստեղծվել է գյուղացիության կործանման և ստրկական տնտեսության ծավալման հետևանքով: Հին-հռոմեյական պրոլետարիատն ամենեվին մարտական, միաձուլ ու կազմակերպված մի դասակարգ չի յեղել, ինչպիսին է այսօրվա պրոլետարիատը: Բոլոր այդ դասակարգերի անոգնականությունը արտահայտիչն ահա հանդիսացավ քրիստոնեյությունը, վորը մի կոչ էր յերկրային շինարարությունից հրաժարվելու և աշխարհից փախուստ տալու: Այդ առանձին ցայտունությամբ արտահայտված է լեռան քարոզում:

2. Հրեյա եմիգրանտների դերը քրիստոնեյության տարածման խնդրում:

